Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին
կնքված N 1032-11002/23-ՍԿ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 5

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 20. Սյունիքի մարզ – Կապան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2024- 31.12.2024թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2024- 31.12.2024թթ. |
| **Ներկայացման օր** | 07.01.2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

2. **Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը**

**Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման շրջանակներում** հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 49 շահառուի: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է շահառուների կարիքների վերագնահատում, որի հիման վրա իրականացվել է 23 ուղղորդում, 7 միջամտություն/միջնորդում այլ կառույցներ, 2 դեպքի վարում՝ հաշմանդամության II խումբ ունեցող 2 շահառուների համար իրականացվել է փաստաթղթերի հավաքագրում եւ փաստագրումների ժամկետի երկարաձգում:
Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին:
Ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 5 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 15 շահառու:
**Կենցաղային սպասարկման աջակցության տրամադրման շրջանակներում** հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 49 շահառուի: Յուրաքանչյուր շահառուի իր անհատական կարիքից և ինքնասպասարկման կարողություններից ելնելով աջակցություն է տրամադրվել անձնական հիգիենայի, բնակարանի մաքրության պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների մուծման իրականացման հարցում, անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի, բժշկական հաստատություն և այլն:
**Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում** 49 շահառուի իրականացվել է տնայց՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը. տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և

տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 9 շահառուի համար բուժքրոջ կողմից կազմակերպվել է պոլիկլինիկայից դեղորայքի ստացում և փոխանցում շահառուին, ինչպես նաև թվով 3 շահառուի ուղեկցում բժշկական հաստատություններ: Իրականացվել է թվով 3 շահառուի համար միջմկանային ներարկում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները կցվել են եռամսյակային հաշվետվությունների մեջ:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում առկա խնդիրը, որին բախվել է կենտրոնի աշխատակազմը կապված է պարբերաբար կազմակերպությանը դիմող քաղաքացիներին աջակցման հետ, ովքեր ունեն տնային պայմաններում խնամքի ծառայությունների ստացման առաջնահերթ կարիք, սակայն միայնակ չեն կարողանում զբաղվել ուղեգրման համար պահանջվող փաստաթղթաբանությամբ՝ առողջական խնդիրներով պայմանավորված տանից դուրս գալ չկարողանալու պատճառով: Հաշվի առնելով ծառայության ստացման առաջնային կարիքը՝ կազմակերպության աշխատակիցները աջակցում են վերջիններին՝ կազմակերպելով ամբողջ գործընթացը, որը բավականին ժամանակատար է, մասնավորապես բժշկական քարտի լրացումը:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի ՏԿ- ի սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾՏԿ-ում կայացած համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվել են համայնքի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում չներառված.

սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը:

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է «Գործընկերություն հանուն Սյունիքի բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրերի շրջանակներում կազմակերպված՝ «Սոցիալական աջակցության մասին» տվյալաինենության և «Տեղական սոցիալական ծրագրերի մշակման գործընթացը» տեսագործնական դասընթացներին, որոնց ընթացքում քննարկվել է գործող օրենքի կարգավորման շրջանակը, սկզբունքները, ինչպես նաև սպասվող փոփոխությունները:

Կապանի ՏԿ-ի սոցիալական աշխատողը մասնակցել է «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին, որի ընթացքում ուսումնասիրվել է սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները: Քննարկվել են սոցիալական դեպքերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ընթացիկ աշխատանքները:

Մասնակցություն է եղել նաեւ Կապանում կազմակերպված «Քոնի տեղահանված անձանց շրջանում ականներից տուժածների հետ հարցազրույցի վարում. տվյալների հավաքագրում» թեմայով դասընթացին, ինչպես նաև Կապանի թիմը ակտիվ մասնակցել է Ալվերանում կազմակերպված թիմ բիլդինգին:

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 48/48 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 40 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 42 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 0<br>Բ - 48 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 48 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 48 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 48 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 9 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 10 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>սննդային փաթեթի տրամադրում | -<br>48 |

Կազմակերպության ղեկավար  *Երվանդ Մխիթարյան*  «07» 01.2025թ.

[illegible]